ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 12-Ի N 702-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության պետական սահմանի ռեժիմ սահմանելու մասին» N 702-Ն որոշման N 3 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 1-ին կետում «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության» բառերով.

2) 16-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«16. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունն իրականացնում է պետական սահմանով բացթողնվող սննդամթերքի, սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող նյութերի և դրանք տեղափոխող տրանսպորտային միջոցների սանիտարահամաճարակային, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ապրանքների անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական վերահսկողություն:».

3) 17-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 18-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«գ. սննդամթերքի անվտանգության, անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական վերահսկողություն,».

4) 17-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» և 18-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա. սնդամթերքի անվտանգության, անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական վերահսկողություն,».

5) N 4 ձևի վերջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

Առանց ԱՊՊԱ պայմանագիր կնքելու ավտոտրանսպորտային միջոցը վարելու համար սահմանված է տուգանք 100 000 դրամի չափով:	За использование автотранспортного средства без контракта по ОСАГО назначается штраф на сумму 100 000 армянских драмов.	Driving the motor vehicle without an MTPL contract is subject to a 100 000 AMD fine.

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: